№ 118 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 15 — 1905 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 15 № 118

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԱԿԱՆ ԱՐԾԱՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Բայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով.

Բայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խաղաղութեան գործը. Վերջին տեղեկութիւններ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ գաւառից. Մահմեդականի կոչը. Դրամատիական ընկերութեան ժողովը. Յարաբերութիւնները բարդվում են. Հին-Նախիջևանի աղէտի զոհերի օգտին. Մեր իրականութիւնը. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

Թիֆլիսում վերջին օրերս տեղի ունեցան մի քանի խորհրդակցութիւններ հայ և թուրք ներկայացուցիչների մէջ. Այդ խորհրդակցութիւնների նպատակն էր գործնական միջոցներ մշակել դադարեցնելու մեր երկրում տեղի ունեցող կոտորածները և վերջ տալու այն չափազանց լարված ու ահաբեկված դրութեանը, որի մէջ գտնվում է մեր երկրի ժողովուրդը ընդարձակ տարածութեան վրա.

Մենք շատ անգամ ենք խօսել մեր երկրի ազգութիւնների հաշտարարութեան նշանակութեան մասին և ցոյց ենք տուել ընդհանուր մեր ծննդավայրը Կովկասի զարգացման համար նրա բոլոր բնակիչների միաբան և աշխատունակ գործունէութեան կարևորութիւնը. Այդ նիւթի շուրջը պատել են և այն բազմաթիւ խորհրդակցութիւնները, որոնք կայացել են զանազան գաւառական շրջաններում. Հաշտարարութեան և գործակցութեան քարոզը չափազանց տարածված է մեր երկրի մէջ. Սակայն նա չէ դարձել խոր գիտակցութիւն մասսաների համար, նա այն պէս չէ հասակել բոլորի ամբողջ գոյութիւնը, որ մենք բոլոր կովկասցիներս զգայինք մեզ իբրև մի ծննդավայրի օրինական եղբայրներ և հարևաններ. Մեր քաղաքացիական տհասութիւնը, մեր հարևանների խորթութիւնը, մեր մասսաները պատող խաւարը այնքան դեռ կաշկանդել են մարդկանց հոգին ու միտքը, որ մենք անկարող ենք առանց երկիւղի, կասկածի նայել մեր վաղվայ օրվայ վրա.

Անկասկած, իրական կեանքի դառն փորձը դասեր է պատրաստում մեր բոլորի համար. Եւ Բագուի, Նախիջևանի, Երևանի դէպքերը արդէն թանգ գնով հաստատեցին շատերին, որ տեղի ունեցած դիւական խաղերը շատ վտանգաբեր էին բոլորի համար. Բայց պէտք է վերջապէս սթափվել և հասկանալ, որ ամէն մի սոսկալի էջ մեր երկրի կեանքի մէջ նոր ու նոր վիհեր է բաց անում մեր երկրի ազգութիւնների մէջ, վիհեր, որոնք յետոյ հսկայական ամենամեծ ոյժերով անգամ չեն հարթվի և ոչնչանայ.

Մենք առաձին հաճութեամբ արձանագրում ենք, որ Գանձակի նահանգի հայ և թուրք ազգաբնակութեանը մինչև այժմ աջողվել է զսպել չար կրքերը և հաշտութիւն պահպանել երկու ազգութիւնների մէջ. Նոյնը աջողվել է և Թիֆլիսի նահանգում, որտեղ մահմեդականներ կան մեծ թիւով երեք գաւառում.

Դժբաղդաբար չէ խաղ ղվել և չէ խաղաղվում Արաքսի աւազանը, որտեղ դեռ շարունակվում են ընդհարումները.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախիջևանի գաւառից մեզ տեղեկացնում են, որ գիւղերը տ տեսական վերջնական քայքայման մեծ վ[illegible]գի մէջ են. Բացի այն հանգամանքից, որ գիւղացիները անկարող են նե[illegible] կայուսս խնամել իրանց արտերը, ջրել ն[illegible]նց և հունձ վերցնել, նկատվում է և մարդերի ուժեղ արշաւանք. Գիւղացիները չեն ցանկանում կտրել իրանց յոյսը և ամէն օր սպասում են մի հրաշքի, որ նրանց հնարաւորութիւն տայ տէր դառնալու իրանց աշխատանքին. Բայց դեռ հրաշքը չէ կատարվել. Մեծ յոյս են դրել պրինց Նապոլէօնի գալստեան վրա, որից սպասում են անմիջական կարգադրութիւն զօրքեր դնելու գիւղական հողերում և ապահովելու գիւղական աշխատանքների կատարումը. Բայց մի բանն է սոսկալի, որ այժմ ամէն մի օրը ճակատագրական է, ամէն մի օր արտերում փչանում են տասնեակ հազարների արժէքներ և ժողովրդական ապրուստի մթերքներ.

Ստացանք հետևեալ հեռագիրը.

Նախիջեւան, 14 յունիսի, ցերեկվայ 12 ժ. 5 ր.

«Պրինց Նապոլէօն սպասվում է Նախիջևանում վաղը. Նորս գիւղում գտնվել են 18 դիակներ. Զնաբերդ գիւղի վրա յարձակումը յետ է մղվել յունիսի 12-ին».

Մեսրոպ վարդապետ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

Գառնի-Բասար, Զիգդալու գիւղ, յունիսի 7-ին. Մայիսի 26-ին Ղամարլուում Թուրքերը յարձակվեցին հայերի վրա և սկսեցին կրակ բաց անել. Սկսեցին պատերի ետեւից, փողոցների զանազան անկիւններից միմեանց վրա հրացան ու ատրճանակներ արձակել, մինչև ուշ երեկոյ երկու կողմից իրար զոհեր տալով. Գիշերվայ համատարած լռութեան մէջ հեռուից լսելի էր լինում չարագուշակ տրաք-տրաքոցի ձայները աւելի մեղմ չափով. Հետևեալ օրը՝ 27-ին, կրկին շարունակվեց մասամբ ընդհատված կռիւը. Թուրքերի մի մասը գինված էր հինգ կրականոց վերջին սիստեմի հրացաններով, այդ առիթ տուեց նրանց երկրորդ օրը հայերի յարձակման դէմ մասամբ պաշտպանվել, որի միջոցին մի քանի զոհեր ընկան Թուրքերի կողմից, իսկ վերջինները իրանց վրէժը առան, սպանելով մի ռուս ստրաժնիկ և երկաթուղու ճանապարհի վրայի բանուորներից մի վրացի և մի, կարծեմ, յոյն. Ղամարլուի շուկայում Թուրքերի թաղի կողմից ծակած են հայերի խանութների պատերը և թալանել տարել են միջի եղած ապրանքը. ապրանքի հետքերը գտնված են Թուրքերի մօտ. Մայիսի 28-ին տեղական Թուրքերը միացած Սուրմալուի գաւառի Թուրքերի հետ, մեծ ոյժով, «Եա Ալի», գոռալով յարձակվում են Նովրուզլու հայ գիւղի վրա, նախօրօք քարշած, տարած լինելով գիւղի նախիրը. Գիւղի հանդէպ թալանի տենչով վառված Թուրքերը դիմադրութեան են ենթարկվում գիւղացիների կողմից. Մի ժամի չափ կուելուց յետոյ մօտիկ Ղամարլուից օգնութեան է հասնում կազակների մի խումբ, օֆիցէրի հետ միասին, այդ միջոցին հայերի կողմից ընկած է լինում մի եռանդուն կուող երիտասարդ. Կազակների ներկայութիւնը չէ սանձահարում Թուրքերի կատաղութիւնը, նրանք անպատճառ ուզում են մտնել գիւղը և թալանել. Օֆիցէրը հրամայում է կրակ բաց անել օդի մէջ Թուրքերի վրա, երկու երեք նուագ միահամուռ կրակ բաց անելուց յետոյ, Թուրքերը համոզվում են, ճիշդ որ օֆիցէրը իր կազակներով նրանց հետ հանաք չէ անում, որովհետև երկու երեք Թուրք արիւնաշաղախ Թաւալվում են գետնի վրա, յետոյ Թողնում են, յուսակտուր, լաստերով անցնում Արաքսը. Այսպէս Թուրքերը պարբերաբար յարձակվում են միացած ոյժերով հայկական գիւղերի վրա, նաև Դարղալու գիւղի վրա՝ Թալանում, կրակում են մի քանի տներ, ասում են, և եկեղեցին. Առհասարակ հայկական գիւղերը, բոլորը խիստ և ուժեղ պաշտպանողական դիրք են բռնել, Թուրքերի յարձակվելու դէպքում, դիմադրելու համար. Ընդհարում եղած, կամ յարձակման ենթարկված գիւղերում սպանութիւնների որոշ թիւը ճիշդ յայտնի չէ, թէպէտ սպանութիւններ եղել են երկու կողմից էլ. Լուր կայ, որ Սուրմալուի գաւառի ռամազանցի քուրդ էլ-Աղասի Ալ-Աշրաֆ-բէկ մտադիր է, իր մի քանի հարիւր քուրդ հրոսակախմբով, արշաւել դէպի մեր կողմերը.

—

Նախիջևանի և Շարուրի կողմերից ամէն օր ֆուրգօնով գալիս են թալանած կողոպտված ընտանիքներ, անպայման օգնութեան կարօտ. Գալիս են առանց որ և է միջոցի, մի կտոր չոր հացի կարօտ. Մի ամիս առաջ իր սեփական յարկի տակ պատուով ու ապահով ապրող մարդը, այսօր ձեռք է մեկնում ուրիշին, ողորմութիւն խնդրում. Այս դժբաղդների հաղորդած ցնցող լուրերը մարդ չի կարողանում հանգիստ լսել, այնքան յուզիչ են և աղէխարշ. Անհնարին է առանց զգացվելու, առանց արցունքի լսել խաբէբայութեան և սև դաւաճանութեան զոհ գնացած հազարաւոր անմեղ արիւններ, պագշոտութեան զոհ գնացած անմեղ կոյսեր և այնքան դժբաղդացած ընտանիքներ, որոնք գուցէ մինչև իրանց կեանքի վերջերը նոյնքան թշուառ և տարագիր մնան, որքան մեր թիւրքա-հայաստանցի անօգնական եղբայրները.

Ս. Տէր-Թովմասեան

ՄԱՀՄԵԴԱԿԱՆԻ ԿՈՉԸ

Մեզ ուղարկված է Երևանից հետևեալը տպագրելու համար.

Բաց նամակ Երեւանի հայերին

Ձեզ եմ ուղղում, հայ եղբայրներ, իմ խօսքը. Ուղղում եմ ձեզ այն պատճառով, որ համոզված եմ ձեր գաղափարական պատրաստութեան, զգայնութեան և խելահասութեան մէջ, իսկ իմ եղբայր Թուրքերը չեն հասկանայ ինձ... Կասեմ աւելին. Նրանք երես են դարձնում ինձանից, նրանք չեն ուզում լսել ինձ, նրանք իւրաքանչիւր անկեղծ խօսքի մէջ, որ ուղղվում է նրանց, տեսնում են «յետին միտք» և ի դառն ցաւակցութիւն իմ, իրանց իւրաքանչիւր անկեղծ բարեկամի մէջ տեսնում են թշնամի... Բայց սա իւրաքանչիւր մութ ամբոխի յատկութիւնն է, իսկ իմ եղբայր Թուրքերի մեծամասնութիւնը մութ ամբոխ է կազմում. Աւելացրէք դրան, որ Թուրքերի մէջ կատարելապէս բացակայում է գաղափարական կազմակերպված ինտելիգենցիա, և դուք կը հասկանաք թէ ինչու այդ ամբոխին ուղղած իւրաքանչիւր անկեղծ խօսք յետ է ցատկում, ինչպէս պատին խփած սիսեռը...

Իսկ դուք, հայ եղբայրներ, այդպէս չէք. Մի որ և է բանի համար չէ՞ որ դուք արժանացել էք ամբողջ լուսաւորված աշխարհի ուշադրութեան... Զուր չէ ձեզ համակրում այդ լուսաւորված աշխարհը, ցաւում է ձեր վշտով, համակրանք է յայտնում ձեր մէջ ծնված շարժման...

Ձեր ազգը գլուխ ունի, յանձին միաբանված գաղափարական ինտելիգենցիայի...

Ամբողջ լուսաւորված աշխարհի աչքերը այս օրերում դարձած են ձեզ վրա և դուք պարտաւոր էք ապացուցանել այդ ամբողջ աշխարհին, թէ դուք հասել էք այն գրութեան, երբ ամէն մէկը, ցոյց տալով ձեզ, իրաւունք կունենայ ասել ձեզ. «ահա իսկական մարդիկ».

Եւ այսպէս, դուք հասկանում էք, թէ ինչու յատկապէս ձեզ եմ ուղղում իմ խօսքը...

Իսկ իմ խօսքը—խաղաղութեան խօսքն է.

Եղբայր հայեր. Ներեցէք ձեր դժբախտ հարևաններին՝ նրանց այն կամայ և ակամայ գործողութիւնների համար, որոնք արտայայտվեցին ձեզ դէմ...

Ներեցէք նրանց յանուն մեծ աւանդների Փրկիչ Քրիստոսի, Որի խօսքը դուք դաւանում էք...

Ամաչեցրէք նրանց ձեր ներողամտութեամբ և նրանք կը հասկանան ձեզ զարթնած խղճով.

Հաւատացէք, եղբայրներ, այնքան չեն ընկել ձեր հարևանները և «չէ մեռել Աստուածը նրանց հոգու մէջ»... Աջակցեցէք ուրեմն, եղբայր հայեր, որ խիղճը վերակենդանանայ ձեր հարևանների սրտերի մէջ ձեր ներմամբ՝ յանուն քրիստոնէական սուրբ սիրոյ...

Քրիստոս ներեց իր դահիճներին, իսկ դուք, մեծ վարդապետութեան արժանաւոր հետևողներ, մի՞թէ չէք կարող ներել ձեր եղբայրներին, որոնք միայն ուրիշ կրօն են դաւանում.

Արդեօք լսո՞ւմ էք, եղբայր հայեր, իմ հեծեծանքը. Միայն ականջներով չը պէտք է լսել, այլ սրտով. Կրակոտ, սիրով և կարեկցութեամբ լի սրտով...

Եւ ես համոզված եմ, որ ում կրծքի մէջ սիրտ է թրթռում, նա կը լսէ և կը հասկանայ ինձ...

Իսկ մինչև այդ պիտի կրկնեմ և կրկնեմ. Ներեցէք, հայ եղբայրներ, ձեր «դին-այրի» եղբայրներին և հաշտութեան ձեռք մեկնեցէք նրանց.

Մահմեդական

1905 թ. մայիսեան յիշատակելի օրերում.

Երևան

ԴՐԱՄԱՏԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ

Կիրակի, յունիսի 12-ին, Արտիստական ընկերութեան դահլիճում կայացաւ հայոց դրամատիական ընկերութեան ընդհանուր ժողովը. Ժողովին նախագահ ընտրվեց Շերվանզադէ, իսկ քարտուղար Կարապետեան.

Ժողովը նախ ոտի կանգնելով յարգեց Նախիջևանի զոհերի յիշատակը և ապա անցաւ հաշուետուութեան հարցին.

Ընկերութեան գանձապահ պ. Ալ. Խատիսեան կարդաց ընկերութեան 1904/5 թ. սեզօնի հաշիւը. Հաշուից երևաց, որ անցեալ սեզօնում 25 ներկայացումներից մուտքը եղել է 11358 ր. 80 կ., իսկ ծախս 18532 ր. 89 կ., դեֆիցիտ թատրօնական գործից 7174 ր. 9 կ. այս վնասը ծածկված է անդամավճարներից, պ. Մանթաշեանի նուիրած 5000 ր. գումարով, ընկերութեան օգտին տուած ներկայացման եկամուտով. Այնպէս որ զուտ վնաս եղել է միայն 415 ր. 20 կ., որ վերցրած է անձեռնմխելի գումարից. Անձեռնմխելի գումարը 7667 ր. 06 կ., որից անցեալ սեզօնների դեֆիցիտը ծածկելու համար ծախսված է 2809 ր. 35 կ., իսկ այս տարվայ ծախսը ծածկելու համար 415 ր. 20 կ.: Առձեռն դրամ դրամարկղում մնում է 4213 ր. 39 կ. բացի դրանից վարչութիւնը յոյս ունի ստանալու պ. Աֆրիկեանից 1000 ր., մի ներկայացումից էլի մօտ 900 կամ 1000 ր., այնպէս որ անձեռնմխելի գումարը միւս սեզօնում յոյս կայ լրացնելու: Իսկ միւս սեզօնի ընթացիկ ծախսերի համար պ. Մանթաշեանի ստացած 5000 բուբլի:

Անցեալ սեզօնին միջին թւով իւրաքանչիւր ներկայացումից մուտք է եղել 454 ր. 35 կ. իսկ ծախս է եղել 741 ր. 31 կ., իսկ իւրաքանչիւր ներկայացումից միջին թւով վնաս է ստացված 286 ր. 96 կ., որ համեմատելով անցեալ 1903/4 թ. սեզօնի հետ մօտ 71 բուբլի աւելի վնաս է եղել: Ամենամեծ ծախս եղել է թատրօնի վարձ 7700 ր. և ռոճիկներ 6635 ր. 50 կ.:

Ժողովը լսելով հաշիւը և 1905/6 ր. նախահաշիւը՝ հաստատեց, անցաւ Հալաբարում ժողովրդական ներկայացումներ տալու համար Արաքսեանի թատրօնը վերցնելու հարցին: Թեր և դէմ խօսվելուց յետոյ, ժողովը աչքի առաջ ունենալով, որ ներկայումս ընկերութիւնը դեֆիցիտ ունի, և բացի դրանից Արաքսեանի առաջարկած պայմանները ծանր են ընկերութեան համար, որ մօտ 7000 ր. կը նստի ընկերութեան, որոշեց այդ պայմաններով չը վերցնել Հալաբարի թատրօնը ընկերութեան ներկայացումների համար, այլ թողնել վարչութեան, եթէ հնարաւոր կը լինի մի քանի ներկայացումներ յաջողեցնել Հալաբա-

բում։ Իշխանուհի Մ. Թումանեան առաջարկում է ժողովին տպագրել հանգուցեալ Տէր-Գրիգորեանի գրուածքները ընկերութեան անունով։ Ժողովը այս և մրցանակաբաշխութեան համար ընտրվելիք անդամների ընտրութիւնը որոշեց յետաձգել սեպտեմբերին և ընտրել երկու մրցանաբաշխութիւնների համար միայն մի յանձնաժողով։

Ց. Կ.

ՑԱՐԱՌԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲԱՐԴՎՈՒՄ ԵՆ

(Նամակ Նոր-Բայազէտից)

—

Հայ-Թուրքական դրացիական յարաբերութիւնները հետզհետէ բարդվում են նաև մեզանում։ Նոր-Բայազէտի գաւառի ընդարձակ տարածութեան մէջ, որտեղ 130-ից աւելի մեծադիր գիւղեր կան հայ և Թիւրք ժողովրդով, չէք գտնի մի անկիւն, ուր ժողովուրդը պաշարված չը լինի ահ ու երկիւղով։ Ամեն ոք տարօրինակ օրհասական դրութեան մէջ է և ամեն մի գիւղի ժողովուրդ մտածում է իր կեանքի և գոյքի ապահովութեան մասին։ Եւ ոչ ոք չէ երաշխաւորում, որ վաղը անձեռմխելի կը մնան թէ ինքը և թէ իր կայքը։ Սարսափը ընդհանուր է. ալան-թալանը բռնել է ամբողջ գաւառը։—Մի օր մի գիւղի տաւարն են քշում քուրդ ու Թիւրք հրոսակները, երկրորդ օրը՝ միւսի ոչխարը, երրորդ օրը սպառնում են ուրիշ համայնքներին թալանելու սպանել և այլն։ Եւ այդպէս Թիւրքերի և քրդերի խմբական լեգէօններ, որոնցով վրխտում են մանաւանդ այս ամառը մեր գաւառի սարահարթերը իբրև եայլաղաւորներ, տեղական Թիւրք տարրի գաղտնի աջակցութեամբ, ամեն օր ասպատակում են մեր գաւառը, վրդովելով միանգամայն անօգնական ժողովրդի խաղաղութիւնը...

Մայիսի 30-ին լուր առանք թէ Ագրիջայի կողմից քշել են և տարել հայերի ոչխարները—մի մեծ սուրու—բայց տեղական ստրաժնիկները հալածելով՝ յետ են խլել։ Այս ամսի 1-ին նոյնպէս լուր բերին, թէ Բասարգէչարի, Ղրխ-Բուլաղի և Թուսկիլլի գիւղերի նախիրները քշել են, բայց հայերը հետապնդելով՝ յետ են խլել աւարը։ 3 օր առաջ դարձեալ հայ գիւղերի տաւարներ քշեցին Դարաչիչագի մասում, որի սարահարթում—Էշակ-Մէյդանում—ամառները բանակ են դնում Ղաղախի Թիւրքերը։ Իսկ Թէզխարաբ հայ և Քանքան Թիւրք գիւղերում արդէն ընդհարում է տեղի ունեցել, որտեղ ընկել են իբր թէ 3 հոգի հայերից և 3 քիւրդերից։ Մի սպանութիւն կատարվել է նաև Ճաղալու հայ գիւղում, որը սակայն անցաւ իբրև սովորական սպանութիւն։

Այնուամենայնիւ ցաւալի է այն, որ բարդվելով դրացիական յարաբերութիւնները երկու հարևան ազգերի մէջ, ստեղծվում է այնպիսի մի մեծ անջրպետ այդ երկու դարաւոր հարևանների մէջ, որի պատճառով դուցէ երկար ժամանակ անկարելի լինի գիւղական կեանքը իր նախկին շաւղի մէջ դնել։ Ընդհանրապէս վերցրած ամեն տեղ այժմ հայ և Թիւրք խէթ աչքով են նայում միմեանց, որքան էլ, որ կապված լինեն միմեանց հետ թէ տնտեսական և թէ բարեկամական կապերով։ Եւ այդ պատճառով յուզմունքը և խռովութիւնները գաւառի զանազան մասերում աչքի են ընկնում իրանց ահռելի բնաւորութեամբ։

Եւ ահա երկու ազգութիւնների փոխադարձ յարաբերութիւնների բարդման պատճառով, պէտք էր մի փոքր նախազգուշական միջոցներ ձեռք առնել, ուստի Նոր-Բայազէտի քաղաքային վարչութիւնը իր յունիսի 2-ի նիստում մի հեռագիր կազմելով՝ դիմեց Երևանի պարոն նահանգապետին, խնդրելով 100 հոգի կօզակներ, որոնք կարողանային գաղտնացած ավրոխի հակումները զսպել... Սակայն անհերքելի փաստ է, որ որտեղ ժողովուրդը զինված է մասնաւորապէս,—այդտեղ յարձակում չէ լինում, իսկ երբ ժողովուրդը անզէն է, նա ենթարկվում է յարձակման և անխնայաբար կողոպտվում է։

Չը մոռանանք յիշել, որ ամեն օր Դարալագեազի, Բասարգէչարի և այլ գիւղական շրջաններից խումբ-խումբ սարսափահար եղած մարդիկ գալիս են մեր քաղաքը և օգնութիւն խնդրում Թիւրքերի և հրոսակային քրդերի յարձակմանը դէմ դնելու համար։ Ինչպէս լսվում է, վերջերս բաւական Թով քրդեր են անցել Արաքսի միւս ափից դէպի մեր սահմանները՝ կողոպտումներ և ասպատակութիւններ անելու նպատակով...

Գ. Սինանեան

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԱՂԷՏԻ ԶՈՀԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Ստացանք. 1. Ցարութիւն Կորգանեանից 100 ր., 2. Գ. Կէվանեանից 6 ր., 3. տիկ. Շուշանիկից 2 ր., 4. Հախվէրդեանից 3 ր., 5. Կօշկակար Սահակեանի բանուորներից 12 ր., 6. Բագուից Գ. Մարտիրոսեանի և Ց. Ադամեանի ձեռքով հաւաքած 143 ր. 50 կ., 7. Բագուից մի խումբ ծառայողներից Համբ. Միրաքեանի ձեռքով հաւաքած 12 ր. 50 կ., 8. բժ, Ա. Վարդանեանից (Ն. Ախտա) 5 ր., 9. Սարիղամիշի հասարակութիւնից հաւաքած 172 ր. 27 կ., 10. Մ. Աւագեանից (Բօստօվ) 2 ր., 11. Մ. Մելիք-Մկրտչեանից 3 ր., 12. Անանէնֆելդի հայ ժողովրդից Ց. Մանասեանի և Բ. Բաղդասարեանի ձեռքով հաւաքած 55 ր. 60 կ., 13. Ս. Խոսրովեանից (Կրասնօվոդսկ) 10 ր., 14. Իվ. Առաքելեանից (Վլադիկավկազ) 5 ր., 15. Մօսկվայից Էմմանուէլ քահանայ Նազարեանի ձեռքով հանգանակած 100 ր., 16. Իլօվայսկի և Խարցիսկ կայարանից Օհան Յովակիմեանի ձեռքով հաւաքած 45 ր. 80 կ., 17) «Արաքս» ֆոտոգրաֆիայի ընտանեկան շրջանում Լևոն Միրզոյեանի ձեռքով հաւաքած 15 ր., 18. Լ. Խոջամիրեանից 3 ր., 19) Դանձակից Ս. Մալխասեանի ձեռքով հաւաքած 7 ր., 20. Բագուից ապրանքատար կայարանի ռուս, վրացի, հրէայ և Սալմաստեցի հայ ծառայողներից Սարգ. Տէր Յարութիւնեանի ձեռքով հանգանակած 105 ր., 21. Մի ոմն (Բագու) 5 ր., 22. Տող գիւղի հասարակութիւնից Գ, Յովսէփեանի ձեռքով հաւաքած 25 ր., 23. Կարսից Վարօ Յարութիւնեանի միջոցով մի խումբ աշակերտներից հաւաքած (մասնաժողովին յանձնելու համար) 25 ր., 24. Յակոբ քահանայ Նախաշեանից (Նոր-Նախիջևան) 1 ր., 25) Խ. Վ.-ից (Եալթա) 1 ր., 26. Կաղանջուկի մի խումբ հայ երիտասարդներից Կարապետ Խաչումեանի ձեռքով հաւաքած մասնաժողովին յանձնելու համար 41 ր. 60 կ., 27) Սարատովից Եփ. Կարախանեանի ձեռքով հաւաքած 69 ր., 28. Բագուից Լ. Իվանեանի ձեռքով հաւաքած 31 ր. 75 կ., 29) Մոզդոկից ս. Ստեփանոս եկեղեցում հոգեհանգիստի ժամանակ Ց. Խոջայեանի ձեռքով հաւաքած 671 ր. 50 կ., 30. Նօվօչերկասկից Յակոբ Էյվազեանի ձեռքով հաւաքած 67 ր. 50 կ., 31. Փ. Ալլահվերդեանից (Սուէմ) 25 ր., 32. Եղբ. Ալէքսանեաններից (Կրասնօվոդսկ) 5 ր., 33. Բագուից Մարդասիրական ընկերության աշխատողներից (մասնաժողովին յանձնելու համար) Տիգ. Բաբայեանի միջոցով 13 ր. 85 կ., 33. Կարսի մի խումբ աշակերտուհիներից 34 ր. 77 կ., 34. Բագվայ հայ գաղութից ժողոված Ի. Տէր-Մաթեոսեանի միջոցով (մասնաժողովին յանձնելու համար) 62 ր. 50 կ., 35. Մի ոմն (Բիպին) 5 ր., 36, Ի. Ղազեանից (Պաուլէշտ) 10 ր., 37. Բօսաօվ Դոնի վրա գիմնազիայի մի խումբ աշակերտներից Ց. Տէր-Կարապետեանի միջոցով 8 ր. 50 կ., 38. Կրասնօվոդսկից Գր. Յովսէփեանի միջոցով 77 ր. 50 կ., 39. Մ. Ասլանեանից (Տիբասպոլ) 5 ր. 35 կ., 40. Մ. Մկրտչեանից (Մօսկվա) 5 ր., 41. Նոր-Նախիջևանի եկեղեցական հոգաբարձութիւնից (մասնաժողովին յանձնելու համար) 50 ր., 43. Փոխանակ Լ. Մանգասարեանի դագաղի վրա պսակներ դնելու Եղիշէ աւագ քահանայ Գեղամեանի ձեռքով հաւաքած 40 ռուբլի, 44. Գ. Տիրոսեանից (Բագու) 10 ռուբլի, 45. Բէկ-Ճըղաղլու գիւղում (Երևանի գաւ.) Խ. Սարուխանեանի ձեռքով հաւաքած 8 ր. 75 կ., 46. Փառակեցեանից (Ղզլար) ի յիշատակ վաղաթառամ կնոջ Սանդուխտի (մասնաժողովին յանձնելու համար) 20 ր. 20 կ., 47. Նօվի-Ուրգենչից Յով. Սաֆարեանի միջոցով հաւաքած 47 ր. 5 կ., 48. Բագուից Վ. Մանուկեանի ձեռքով հաւաքած 6 ր. 80 կ., 49. Իւրիեվսկի Զաւօդ (Եկատեր. նահ.) Սահ. Տէր-Աբրահամեանի միջոցով 161 ր. 70 կ., 50. Գրօխլաղնայա կայարան Աստ. Մէղնիկեանի ձեռքով հանգանակած 23 ր., 51. Ե. Մնացականեանից (Մայկօպ) 15 ր., 52. Գեօրիսի Շնհեր գիւղից Ա. Շիրինեանի միջոցով հաւաքած 42 ր. 50 կ., 53. Բ. Սողոմոնեանից (Բագու) 10 ր., 54. Անդիժանից Աւ. Մէլիք-Վարդանեանի ձեռքով հաւաքած 56 ր., 55. Մերվից Մ. Ա. Աստուրեանի միջոցով հաւաքած 270 ր., 56. Ճիաթուրից Տէր-Գասպար Տէր-Գաբրիէլեանի միջոցով 38 ռուբլի, 57. Դիլիժանից Ս. Մէլիք-Մարտիրոսեանի և Խ. Մատինեանի ձեռքով հանգանակած 78 ր., 58) Բաթումից Մեսրոպ աւագ քահ. Մելեանի ձեռքով հանգանակած 15 ր., 50) Ախալքալաքի Բալիս գիւղի հասարակութիւնից Յով. քահ. Տէր-Մինասեանի և Ց. Տէր-Սիմոնեանի ձեռքով հանգանակած 18 ր., 60) Զանգեզուրի գաւառի Խնձորէսկ գիւղից Մ. Ղազարեանի Ց. Սելիկեանցի Ի. Ալլահվերդեանի և Մ. Համբարձումեանի ձեռքով հաւաքած 101 ր., 61. Ղզլչախչախից Մ. Սողոմոնեանի ձեռքով հաւաքած 18 ր. 60 կ., 62. Գանձակից մի հասեստ փոքրաթիւ արհեստաւորների շրջանում (մալեաը) Շմաւոն քահ. Բորեանի ձեռքով հաւաքած 14 ր., 63. Բագուից Ալ. Գեբանեանի ձեռքով հաւաքած (մասնաժողովին յանձնելու համար) 134 ր. 10 կ., 64. Նոր-Նախիջևանի Զալթը գիւղացիներից Խաչ. քահ. Տէր-Բաղդասարեանի ձեռքով հաւաքած 30 ր., 65, Մ. (Ցարիցին) 10 ր., 66. Հողաթափ վաճառողներից 10 ր.։ Ընդհանուր գումարը, նախկին ստացածների հետ միասին 3,800 ր. 38 կոպէկ։

ՄԵՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

—

Ամիսներ առաջ, անցեալ տարվայ վերջերին, երբ բաղձալի գարնան մուտքը հրճուանքով տօնվում էր, ողջունվում լայնածաւալ պետութեան բոլոր այն անկիւններում, որտեղ կայ մտածող տարր, որտեղ ըմբռնում են ընդհանրական խղճալները ու գիտակցաբար վերաբերվում նրանց, մեզանում էլ փչեցին կենարար հովերը, թէև ոչ տարերային ոյժով. փչեցին անչափ մեղմ, կցկտուր, գարնան բուրմունքը հազիւ զգալի դարձրին մեզ համար...

Բայց այդ էլ մեծ բան էր. նրանց շնորհով սառցապատ գետինը կենդանանալու նշաններ ցոյց տուեց. նրա թմրած ոյժերը տաքութիւն զգացին. սկսվեց հինաւուրց սառոյցի հալոցը։ Ցոյս կար, որ նրա տակից պէտք է վեր բարձրանան շուտով գոյնզգոյն ծաղիկներ, բարի պտուղներ խոստացող ծաղիկներ. յոյս կար, որ արևի կենսատու ճառագայթները, որոնք գարնան սկսվելուն պէս ձեղքեցին հօրիզօնի ամպակոյտերն ու տարածվեցին ամեն կողմ, սառցապատ գետինը, պարզ ասած՝ մեր կեանքը, խաւարի ու անկուլտուրականութեան տիպար մեր կեանքը, վայրագ բարքերով ու կենդանական բնազդներով հարուստ մեր տխուր, դառն իրականութիւնը, կը կերպարանափոխեն, կը յեղաշրջեն հիմնաւորապէս, և նա, կեանք անուն կրող յաւիտենական խաչը, կը դառնայ վերջապէս՝ իր համար պատուանդան ունենալով արդարութիւնը ամենալայն չափերով՝ ընդհանրական երջանկութեան աղբիւր, մի բան, որին ձգտել են դարերի ընթացքում մարդկային ցեղի ամենաարժանաւոր ներկայացուցիչները, յանուն որի Մեծ Ուսուցիչը ողողեց իր արիւնով Գողգոթան ու որին ձգտում են այժմս մարդկութիւնը կազմող ազգերից առաջաւորները, լուսաւորները իրանց բոլոր եռանդով, իրանց հանրական ու տնտեսական կեանքի անընդհատ յեղաշրջմամբ, իրանց մտաւոր ու բարոյական ոյժերի անընդհատ յաջորդական զարգացմամբ։

Մեր յոյսը դրած գարնան արևի կենարար ոյժի վրա մենք, ռուս, հայ, վրացի, Թուրք, հրէայ, իբրև մի երկրի զաւակներ, մի օդով ու մի ջրով սնված, փորձեցինք հաւաքական ոյժով աշխատել, աշխատել յանուն ընդհանրական հայրենիքի բարօրութեան, յանուն այն բոլոր ազգերի համահաւասար երջանկութեան, որոնց վիճակված է կողք կողքի ապրել այդ ընդհանրական հայրենիքում, ընդհանրական օջախում. ռուսը, վրացին, լեհացին, հրէան, հայն ու Թուրքը աշխատակցել սկսեցին իրար զանազան հասարակական ժողովներում, այլ և այլ յանձնաժողովներում. սկսեցին խօսել ընդհանրական կարիքների ու ցաւերի մասին, մէկը միւսի պահանջը պաշտպանել, մէկը միւսին խրախուսել, մէկը միւսին աջակցելու պատրաստականութիւն ցոյց տալ ամեն քայլափոխում. տարաձայնութիւններ հատարեա չէին ծագում. ծագած դէպքում էլ շուտով վերացվում էին. համերաշխութիւնը չէր խանգարվում, «շէյթանը» ասպարէզ չէր գալիս, ջուր չէր պղտորում...

Այդպէս էր նորամուտ գարնան սկզբնական շրջանում, անցեալ տարվայ վերջերին ու ներկայի սկզբում. բոլոր մտածող տարրերը գործում էին արթնացած եռանդով, աշխոյժով, գործում էին հաւատով դէպի երջանիկ ապագան, որը շատ մօտ էր թւում, խօսում, մտածում էին լուրջ հասարակական, հանրական ու տնտեսական կազմի կատարելագործման, բարւոքման մասին։

Բայց յանկարծ փչեց մի ցրտաշունչ քամի, կովկասեան Բաբելոնում, Բագուում, ծնունդ ստացան բքածին հողմեր, որոնց տարերային ահարկու ոյժից չքացաւ մեր գարունը, անհետացան գեղածիծաղ օրերը ու աշնանային մռայլ ամպակոյտերը, անթափանցելի քօղով ծածկելով մեր խղճուկ կեանքի, մեր ողորմելի իրականութեան անժպիտ հօրիզօնը, տարան մեզ, խանձեռոդ դարում ապրողներիս ու նրա բարիքներին ձգտողներիս, դէպի միջին դարերը, դէպի այն մութ, մռայլ, ահարկու ժամանակները, երբ սուրը, «եաթաղանը» ամենուրեք ու համարեա ամեն օր, ամեն րոպէ շողշողում էր ամենքի գլխին, երբ մարդիկ ամենից շատ, բացառապէս համարեա մտածում էին գիշեր ցերեկ մի բանի մասին միայն, այն է՝ կեանքի, գոյքի ու պատւի ապահովութեան մասին։

Եւ ահա այսօր մենք հայերս ու Թուրքերս, այնքան դժբաղդ, տգէտ ու խաւար ենք, շատերը մեզանից, խաւարի ու մոլեռանդութեան մէջ խարխափողները, այնքան վայրագ են ու այնքան ընդունակ կոյր գործիք դառնալու պղտոր ջրում ձուկ որսողների ձեռքին, որ բոլոր մտածող տարրերը, ակամայ թողած այն բարդ աշխատանքը, որը կատարելու հրաւիրվում են երկրի հասունացած ոյժերը փետրվարի 18-ի հրովարտակով, թողած հանրական, հասարակական ու տնտեսական բարդ, բարեշէն ու բարւոք շինուածքի կառուցման, կատարելագործման նուիրած աշխատանքը, որին, համաձայն վերոյիշեալ Բարձրագոյն հրովարտակի, պէտք է մասնակցեն ընդհանրական հայրենիքի, լայնածաւալ Ռուսաց կայսրութեան բոլոր խելացի զաւակները, մասնակցեն ձեռք ձեռքի տուած, սերտ համերաշխութեամբ, անկեղծ բարեացակամութեամբ դէպի միմեանց ու բուռն սիրով դէպի այն գործը, որի աջող աւարտումից կախված է բոլորի, առանց կրօնի ու ցեղի խտրութեան, բարօրութիւնը, երջանկութիւնը,—այսօր մտածում են միմիայն իրարից պաշտպանվելու մասին, իրանց ֆիզիքական գոյութիւնը պաշտպանելու ու պահպանելու մասին, այս բառերի ամենապարզ մաքով մտածում են կեանքի, գոյքի ու պատւի ապահովութեան մասին, հանրակեցութեան ու խաղաղ գարգացման ամենատարրական պայմանների մասին, հասարակական, սոցիալական բարդ շինուածքի առաջի, բուն հիմնաքարերի մասին, մարդուն վայել բարւոք կեանքի այբ ու բեռի մասին, որը պէտք է վաղուց բնական օրէնքների շարքն անցած լինէր մեզանում, ինչպէս է այդ բոլոր քաղաքակիրթ երկիրներում, որի մասին մենք չը պէտք է մտածէինք այժմս մի բոպէ անգամ ու որի համար չը պէտք է վատնէինք թանգագին ժամանակն ու ոյժերը... բայց մեր դժբախտութիւնը նրա մէջ է հէնց որ այժմս, այս նշանաւոր պատմական ժամանակում, թողած ամեն բան, թողած ժամանակաւորապէս, ի հարկէ, պէտք է մեր բոլոր աշխատանքը, ոյժերն ու ժամանակը մեր խելացի Թուրք եղբայրակիցների հետ միասին, գլխաւորապէս Թուրք ինտելիգենտ տարրի, նուիրենք այդ գործին, հանրակեցութեան հիմնաքարերի ամրացման. ուրիշ ելք չը կայ։ Եկէք ուրեմն ձեռք ձեռքի տուած մեր հարեւանների հետ, ամեն կերպ ձգտենք այդ նպատակին. աշխատենք սիրով ու համերաշխութեամբ. որտեղ այդպիսի աշխատանք է կատարվում, նա բարի պտուղներ է տալիս։

Ստ. Տէր-Աւետիքեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մենք ստացանք Երևանից, քաղաքագլուխ Մէլիք-Աղամալեանից հետևեալ հեռագիրը, իբրև պատասխան հայ-Թուրքական խորհրդակցութեան կոչի. «Ձեր հեռագիրը զեկուցվեց այն ժողովին, որ բաղկացած էր մուսուլմանների և հայերի ներկայացուցիչներից, Բագուի հասարակութեան ներկայացուցիչներից՝ Թաղիանոսեանի, Հաջինսկու, Բէհբուդովի և Յովհաննէսեանցի մասնակցութեամբ։ Նա ընդունվեց ընդհանուր համակրութեամբ։ Ժողովը միանգամայն համակրելով ձեր արտայայտած հայեացքներին, զբաղված է այժմ մշակելու միջոցներ, որպէս զի ապագայում հնարաւոր չը լինեն ներկայի պէս ցաւալի ընդհարումներ։ Նախագահ ժողովի քաղաքագլուխ Ց. Մէլիք-Աղամալեան»։

—

Երէկ, մենք հաղորդեցինք այն խորհրդակցութեան մասին, որ կայացաւ յունիսի 11-ին հայ և մուսուլման հասարակութիւնների ներկայացուցիչների մէջ։ Խմբագրված կոչը հեռագրով ուղարկվեց զանազան տեղեր, գլխաւորապէս Երևան, Նախիջևան, Գանձակ, Զիբրայիլ, Նուխի, Գօրիս, Օրդուբատ։ Բացի դրանից մենք հաղորդեցինք, որ խորհրդակցու-

թիւնը ընտրեց մի կենտրոնական հայ-թուրքական բիւրո, բաղկացած 20 հոգուց (10 մուսուլման, 10-ը հայ), որին և յանձնեց մշակել միջոցներ թէ անմիտ արիւնհեղութեան վերջ դնելու, ինչպէս և կանոնաւորելու հայերի և թուրքերի յաւաբերութիւնները այն տեղերում, ուր այդ երկու տարրերը ապրում են խառն։ Բիւրօի անդամներ ընտրվեցին հետեւեալ անձինք. մուսուլմաններից—Մահմէդ-բէկ Շարիֆով, Իբրահիմ աղա Վէքիլով, Շարիֆ Միրզայեվ, Ֆրիդուն բէկ Քօչարլինսկի, Մահմադ բէկ Շախմալիէվ, Մահմադ աղա Վէքիլով, Հուսէյն բէկ Եդիգարով, Օսման բէկ Մուֆտի զադէ, Մուստաֆա բէկ Էմինով, Նազիր բէկ Եդիգարով, Աղաբէկ Ախունդով և Մանսուր աղա Դաիրով։ Հայերից—բժ. Ստեփանեան, բժ. Խատիսեան, Հ. Առաքելեան, Մեք. Բաբաջանեան, Շիրվանզադէ Ց. Մելիք-Բէգլարեան, Լ. Մուշեղեան, Ալ. Քալանթար Գ. Ղամբարեան, Ց. Սպէնդիարեան, և Ս. Մելիք-Ադամեան։

—

Նոր-Նախիջևանի հայ հասարակութիւնը ցանկանում էր պարսից շահին հանդիսաւոր ընդունելութիւն ցոյց տալ՝ նրա Բօստովով անցնելու ժամանակ և ներկայացնել նրան աղ ու հաց։ Բայց, ինչպէս հաղորդում են Մոսկվայի լրագիրները, շատ ճանաչաւորների և պատուաւոր քաղաքացիների ոստիկանութիւնը թոյլ չը տուեց ժողովրդին շահի գնացքին, իսկ քաղաքապետը թոյլ չը տուեց ուղերձ ներկայացնել, որը գրված էր հայերէն և ֆրանսերէն։ Քաղաքապետը խլել է ուղերձը քաղաքի ներկայացուցիչներից մէկի ձեռքից։ Չը նայելով այդ ամենին, Նախիջևանի քաղաքագլուխը այնուամենայնիւ ներկայացրել է ուղերձը—որի համար և նա ու ներկայ եղողներն ստացել են քաղաքապետից յանդիմանութիւն։

—

Վրաց հոգևորականութեան ընդհանուր ժողովի նախագահի օգնական Ի. Զիջլավաձէ քահանան քարթալինո-կախէթեան հոգևորականութեան կողմից «Русь» և «Разсвѣтъ» լրագիրների խմբագրութեան և նրաց աշխատակից պ. Դուբնովին ուղարկել է շնորհակալական հեռագիրներ, որովհետև նրանք յօդուածներ են տպել վրաց եկեղեցու օգտին։

—

Քութայիսում վերջին գործադուլների ժամանակ եղբ. Արջավանիձէները չեն ցանկացել փակել իրանց մագազինները, որի պատճառով և կոտրատել են նրանց ապակիները։ Եղբ. Արջավանիձէները այդ մասին յայտնել են ոստիկանութեան, մատնացոյց անելով յանցաւորներին, որոնց ոստիկանութիւնը ձերբակալել է, բայց յետոյ ազատել է։ Այժմ մի գաղտնի կօմիտէտ 100 ր. տուգանք է նշանակել եղբ. Արջավանիձէներին՝ լրտեսութեան համար, արգելելով նրանց երկու օր շարունակ խանութ բաց անել։

—

Յունիսի 7-ին ժողովրդական զուարճութիւնների Վասիլիեվսկի ընկերութեան դահլիճում հաւաքվել էին բաւական մեծ քանակութեամբ ներկայացուցիչներ ամբողջ Ռուսաստանի ուսուցչական դասակարգից։ Ցերեկվայ ժամը 2-ին, ասում է «Р. В.» լրագիրը, ոստիկանական մի ուժեղ խումբ երևաց դահլիճի դռանը և ստիպեց ժողովը ցրել։

—

Մոսկվայի հավատարանի օրդինար պրոֆէսոր իշխան Ս. Ն. Տրուբեցկոյին, ասում է «Н. Ж.» լրագիրը, յանձնարարված է կազմել մի մանրամասն զեկուցագիր Ռուսաստանի հավատարանների վիճակի և վերջին տարիների ուսանողական խառնակութիւնների մասին։

—

Ծովային մինիստրութիւնը, ինչպէս լսել է «Новости» լրագիրը, կարգադրել է զօրացնել ափային ամրութիւնները Կրոնշտատում, Լիբավայում և Ռէվելում։ Մտադրութիւն կայ զօրացնելու ականային արգելքները և խուզարկուական բաժինները։

—

Յունիսի 18-ին Մոսկվայում հրաւիրվում է զեմսկի գործիչների երկրորդ համաժողով։ Նոր համաժողովի նպատակն է քննութեան ենթարկել ժողովրդական ընտրութեան վերաբերող մի քանի մանրամասնութիւններ։ (С. От.)

—

Թիֆլիսի ռուս միսիոնարական եկեղեցու ընթերցարանի դահլիճում յունիսի 11-ին կայացաւ ռուս հոգևորականների ժողով Վրաստանի էկզարխի նախագահութեամբ։ Ժողովը նուիրված էր մայիսի 31-ի միջնադէպին վրաց հոգևորականութեան հետ։

—

Թիֆլիսի գաւառապետ է նշանակված Բօրչալուի գաւառապետ պ. Շանշիեվը։ Իսկ Թիֆլիսի գաւառապետ իշխան Լ. Գ. Զանդիէրին նշանակվում է Երևանի փոխ-նահանգապետ։

—

«Մակի» № 117-ում Նախիջևանի աղէտի օգտին նուէրների վերջում գրված է «մի ռուբլի—50 կ.», պէտք է լինի 1 ր. 50 կ.։

—

ԹԷՀԱՒԻՑ մեզ գրում են. «Շաբաթ յունիսի 4-ին, տեղիս հասարակական ժողովարանի դահլիճում, մի խումբ հայ և վրացի սիրողներ Նախիջևանի աղէտի զոհերի օգտին, ներկայացրին վրացերէն «Ինչ տեսիլ իս, էլ չիս տեսնի» կօմեդիա 3 գործողութեամբ, հեղինակութիւն Ցագարելիի և «Մուրթը սենեակում» վոդեվիլ մէկ գործողութեամբ, թարգմանութիւն իշխան Չիկօվանի։ Ներկայացումը անցաւ բաւականին աջող. սիրողները ոչ մի ջանք չէին խնայել իրանց դերերը լաւ սովորելու համար։ Աչքի էին ընկնում իրանց խաղով վրացիներից օր. օր. Ե. Կարլիէվան և Ն. Գամկրելիձէ. իսկ հայերից՝ պ.պ. Տ. Նարիմանեան և Ի. Ասլանեան։ Դահլիճը ծայրէ ի ծայր լիքն էր խուռն բազմութեամբ, բացակայում էր վրաց հասարակութիւնը։ Մուտքը ընդամենը եղաւ 149 ռուբլի, իսկ ծախսը 29 ռուբլի, զուտ օգուտը մնաց 120 ռուբլի։ Այս գումարը մօտ օրերումս կուղարկվի Երևան, փոխարքայից հաստատված յանձնաժողովին։

—

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻՑ մեզ գրում են. «Ամսիս 5-ին Հոգեգալստեան օրը պատարագից յետոյ, արժ. Գէորգ քահանայ Զաքարեանը կատարելով հոգեհանգիստ Հին-Նախիջևանի նահատակների հոգու համար, մի ազդու դամբանական խօսեց և յորդորեց ծխականներին, որ առատ նուիրատուութեամբ սրբեն թշուառների աչքի արտասուքը։ Այդ ազդու դամբանականից և յորդորից յետոյ կազմեցին ատորագրութեան թերթ, որը աջողութեամբ և առատ նուիրաբերութեամբ առաջ է գնում։ Տիկին Եղիսաբէթ Աշրաբեանը զգացված այդ աղէտալի լուրից՝ իր վզի թանգագին սև ադամանդեայ վզնոցը դրեց հայր Զաքարեանի տրամադրութեան տակ. հասկացողները գնահատում են մօտ 300 ռուբլի։ Հայր Զաքարեանը ուրախութիւնից բարձրաձայն ասաց, «տիկին, ձեր այդ թանգագին նուէրը ոչ թէ նրանց նուիրեցիք, այլ ինձ. այս երկրորդ անգամն է ինձ պարտաւորեցնում էք»։ Հայ տիկինները, իրանց նուէրները տալուց յետոյ, մի ուղերձ պատրաստեցին տիկին Աշրաբեանին ներկայացնելու»։

—

ԶԻԲՈՒԽԼՈՒԻՑ (Նոր-Բայազէտի գաւառ), յունիսի 5-ից մեզ գրում են հետևեալը. «Անձրևները մեղանում առատ են։ Տեղումս այսօր մօտ ժամի երկուսին տեղաց սարսափելի կարկուտ, որը տևեց 15 րոպէ։ Կարկուտը գիւղացիների արտերին ՀԱՍ պատճառեց, այս տարի կարելի է սպասել վատ բերքի։ Վնասված են նոյնպէս և շրջակայ գիւղերի հանդերը։ Մեր խղճուկ գիւղացու համար այս տարի այդպիսի ՀԱՍՆԵՐ կարծես թէ նշանակութիւն չունեն։ Այդ բանի վրա նա անտարբեր է նայում։ Նրան ամբողջապէս գրաւել են այն դէպքերը, որը կատարվում են իր շուրջը։ Բագուի, Երևանի և այլ տեղերի ցաւալի աղէտները սաստիկ կերպով ազդել են գիւղացու վրա։ Չը կայ առաջվայ աշխոյժը, եռանդը դէպի մայր հողի մշակելը։ Այս տարի տեղիս գիւղերից գրեթէ ոչ ոք եայլաղ դուրս չի եկել, միայն թուրքեր են եկել Ղազախի գաւառից նախորդ տարիների պէս։ Թուրքերը առ այժմս հաշտ աչքով են նայում հայերի վրա։ Նրանց մէջ կան և ազդեցիկ մարդիկ, որոնք ամեն կերպ աշխատում են, որպէս զի ընդհարումներ տեղի չունենան հայերի և թուրքերի մէջ։ Արթուն աչքով հսկում են, որ իրանց հօտերը չը ՀԱՍՆԵՆ հայերի արտ ու տափը։ Հայերն էլ իրանց կողմից միշտ համակրանք են ցոյց տալիս թուրքերին։ Եթէ այսպէս շարունակվի, կարելի է վատահ կերպով ասել, որ Ծաղկաձորի այս մասը հանգիստ կը լինի։ Ղազախի գաւառից ստանում ենք մի թերթարիչ լուրեր՝ այնտեղ ազգայնակութիւնը հանգիստ է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Էնզելին, 1 յունիսի 4-ին

Մայիսի վերջին արձակվեց տեղիս դպրանոցը։ Լրանում է և հոգաբարձուների ժամանակամիջոցը։ Ցանկալի էր, որ շուտով կատարվէր հոգաբարձական ընտրութիւն, որովհետև այդ նոր կազմից է կախված նոր ուսուցչի հրաւիրելը։

Չը պէտք է ուրանալ, որ յարգելի հոգաբարձունները իրանց ժամանակամիջոցում ոչ մի ջանք չեն խնայել ուսումնարանը նիւթապէս ապահով դրութեան մէջ պահելու և շատ կարելի է, որ մի քանիսը—եթէ կամովին չը հրաժարվեն, նորից վերընտրվեն, բայց և այնպէս նոր հոգաբարձական կազմի վրա բարոյական պարտականութիւն կայ վաղօրօք հոգս տանել հրաւիրելու հնի փոխարէն նոր ուսուցիչ, որը իր կոչման բարձրութեան վրա կանգնած լինի, աշխատէ միշտ բարձր պահել իր խնամքին յանձնված սրբավայրի անունը և հեղինակութիւնը այս օտար երկրում և փոքրիկ հայ գաղութի ընտանիքներում, ուր ուսուցիչը իր ազնիւ դերն ունի կատարելու, երկպառակութեան ոչ մի որոմ չը ցանէ և մանկավարժութեան բոլոր կանոնների հետ ծանօթ լինի...

Ցանկանում ենք իրագործուած այդ բոլորի, իսկ մեր նախկին ուսուցչին բարի ճանապարհ...

Շատէլ-Արաբ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

13 յունիսի

ՊԱՐԻԶ, 13 յունիսի։ Լուբէն Մադրիդ կը գնայ հոկտեմբերի 10-ին։—Անգլիական էսկադրան Բրէստ կը գնայ յունիսի 27-ին և կը մնայ մինչև յուլիսի 4-ը։ Պատրաստվում են բազմաթիւ հանդէսներ։

ՎԻԵՆՆԱ, 12 յունիսի։ «Ֆրէմդէնբլատ»-ը կարծիք է յայտնում Մարօկկօի հարցի մասին կոնֆէրէնցիա հրաւիրելու առիթով և ենթադրում է, որ աճող յարաբերութիւնների պատճառով՝ բոլոր պետութիւնները պէտք է ըէֆօրմ պահանջեն։ Աւստրիան ցանկանում է, որ բոլոր պետութիւնները հաւասար արտօնութիւն վայելեն, այդ պատճառով էլ ընդունեց կոնֆէրէնցիայի հրաւէրը։

ՊԱՐԻԶ, 18 յունիսի։ Գերմանական օֆիցէրները հեռացան Ֆէցից։ Սուլթանը նուիրեց նրանց ձիեր և զէնքեր։ Արտաքին գործերի մինիստրը հրաժեշտի ճաշ տուեց։—Չինուորական մինիստրը բողոքեց ժամուլի այն մասի դէմ, որը պնդում է թէ բանակն անկարող է կատարել իր պարտքը։ Մինիստրը յայտնեց, որ օֆիցէրների կազմը հիանալի է, մատակարարութեան բաժինը կանոնաւոր է և բանակն իր կոչման բարձրութեան վրա է՝ ինչ էլ որ պատահի։ Մինիստրին ուրախութեան ցոյցեր արին։

ՇԱՆԳՀԱՅ, 12 յունիսի։ Այստեղի եպիսկոպոսական հիւպատոս Օդիգարին Եպիսկոպոս է կանչված։ Նա մեկնելու է յունիսի 14-ին, ուղևորվելով դէպի Վաշինգտոն, իբր եպիսկոպոս լիազօրներից մէկը։

ՄՕԶԻ, 12 յունիսի։ Եպիսկոպոսների Կիսնսիօնը գրաւելու առիթով թղթակիցը հաղորդում է, որ ռուսները քաշվեցին Սուն-Կիսնս։ Երկու բանակների խուզարկուները միշտ իրար հետ շփվում են։ Ռուսները կենտրոնանում են 50 մղոն հիւսիս, Կվայնէյի մօտերը։ Ռուսների զօրքերը բոլորը 15,000-ից աւելի են։ Նրանք շինում են զօրեղ ամրութիւններ։—Ամեն ինչ արվում է, որ Վլադիվոստոկը պատրաստ լինի պաշարման։ Ուսուրեան շրջանից պաշարներ են բերում բերդը։

ՍԻՆԳԱՊՈՒՐ, 13 յունիսի։ Ռուսական «Տերեկ» կրէյսերը մայիսի 23-ին ջրասոյզ արեց անգլո-հնդկական շոգենաւային ընկերութեան «Իկիսնա» շոգենաւը։ Նաւի վրա բրինձ էր բարձած և գնում էր Ռանգուայից Սինգապուր։ Ջրասոյզ նաւի նաւապետը հաղորդում է, որ նաւի նաւաստիներն ու օֆիցէրները երէկ գիշեր Սինգապուր հասան։

ԼՕՆԴՕՆ, 13 յունիսի։ Լոնդ քաղաքը և շրջակայքը յայտարարված են պատերազմական դրութեան մէջ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Լինեվիչի ամենահպատակ հեռագիրները. 1) յունիսի 11-ից. «Բանակներում փոփոխութիւններ չը կան։ Յունիսի 9-ին եպիսկոպոսներն աշխատում էին դուրս քշել մեր պահակները, բայց յետ մղվեցին Կաօխէի հովտում։ Խայլունչէնի շրջանում, Նանշանչէնզի ուղարկված զօրամասը այդ գիւղի մօտ դուրս քշեց եպիսկոպական պահակը և դիմեց դէպի հարաւ։ Ուֆանլօուի վրա ուղարկված զօրամասը, նկատելով եպիսկոպական մեծ ուժեր, յետ քաշվեց և եպիսկոպոսները գրաւեցին Իլանցզին։ Յունիսի 8-ին եպիսկոպոսներն առաջ արշաւեցին Շիմիաօցզիի և Տօուանգօուի կողմից, բայց յետ մղվեցին։ Կօրէայի կողմում յունիսի 8-ին եպիսկոպոսները գրաւեցին Շիւշէնը»։—2) յունիսի 12-ից. «Յունիսի 9-ին թշնամին արշաւեց մեր զօրամասի վրա Խայլանչէնի շրջանում։ Թշնամին արշաւում էր ճակատակողմից և շրջում էր մեր թևը։ Եպիսկոպոսներն արշաւում էին, եռանդով ռմբակոծելով մեր դիրքերը լեռնային թնդանօթներով։ Շրջող զօրասիւնի արագ շարժումն սպառնում էր մեր հաղորդակցութեան ուղիին։ Զօրամասի հրամանատարը ուղարկելով թիկնակողմն անցնել ձգտող թշնամու դէմ իր ունեցած հեծելազօրը, հրաման տուեց նահանջել։ Թշնամին մեզ չը հալածեց»։

ՍՕՖԻԱ, 18 յունիսի։ Համբի-փաշան, որը լիազօրութիւն ունի բանակցելու և կնքելու Թիւրք-բոլգարական դաշնագիր սահմանների մասին, երէկ ժամանեց։

ՏՕԿԻՕ, 13 յունիսի։ Խաղաղութեան նախնական բանակցութիւններն աջող են ընթանում։ Սպասվում է շուտով վերջնական լուծում։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Կասսինին կը մեկնի յունիսի 28-ին։

ՊԷԿԻՆ, 12 յունիսի։ Չինաստանի ռուս դեսպան Պօկատիլօվը Ուրգա հասաւ և անմիջապէս այցելեց Դալայ-լամային, որին յանձնեց Թագաւոր Կայսրի նուէրները։

ԳԷՆՈՒԱ, 12 յունիսի։ Երեկոյեան մի քանի հարիւր հոգի ցոյց արին ռուսական հիւպատոսարանի դէմ։ Հնչեցին թշնամական աղաղակներ։ Ոստիկանութիւնը ցրեց ցուցարարներին։ Ձերբակալված են շատերը։

ՄՈՍԿՎԱ, 13 յունիսի։ Արդիւնագործական զանազան շրջանների ներկայացուցիչների հաւաժողովը դիմեց ֆինանսների մինիստրին հեռագրով՝ խնդրելով, որ ըէֆօրմները մտցնելու ժամանակ չը մոռացվեն և արդիւնագործութեան ներկայացուցիչները։—

ԼՕՆԴՕՆ, 13 յունիսի։ Համայնքների ժողովում Բալֆուրը, պատասխանելով դիմումներին, յայտնեց, որ ինքը համաձայնութիւն տուել է բաւարարութիւն տալու «Նայտ-Կոմանդէր» շոգենաւի ընկղման համար։ Ռուս կառավարութիւնը դժգոհ է իր մի քանի կրէյսերների վարժունքից։ Հրամանգներ են ուղարկված «Դնեպր» կրէյսերին՝ այդպիսի բաներից խուսափել։

ԼՕԴԶ, 13 յունիսի։ Լոդզում զինուորական դրութեան կառավարութիւնը յանձնված է կաւալերիական I կօրպուսի հրամանատար գեներալ Շուտլէվօրտին։ Զոհերի պաշտօնական թիւը դեռ որոշված չէ։ Քաղաքում հանգիստ է։ Լեհական սոցիալիստ կուսակցութիւնը պրօկլամացիա հրատարակեց, կոչելով բանուորներին աշխատանքի։ Նա մատնացոյց է անում մշտական գործադուլների տխուր հետևանքների վրա։

ԽԱՐԿՕՎ, 13 յունիսի։ Սումի և Լեբեդինսկի գաւառներում ծագած անկարգութիւնների ժամանակ տեղ-տեղ բռնութիւններ էին գործ դրվում կալուածատէրերի ստացուածքների և ծառայողների վրա։ Լեբեդինսկի գաւառում 2 տեղ շէնքերը հրդեհեցին։ Ներկայումս, զօրքի գալու շնորհով, շարժումը դադարել է։

ԼԻԲԱՎԱ, 13 յունիսի։ Քաղաքի կենտրոնում ռումբ նետվեց, բայց մեխանիզմի պակասութեան պատճառով չը պայթեց։ Զարափիսը փախաւ։

ԿԱԼԻԾ, 13 յունիսի։ Հրէական ամբոխը փորձ արեց քարուքանդ անելու պետական օղեվաճառանոցը, բայց ոստիկանութիւնը ցրեց։

14 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ներքին գործերի մինիստրութեան գաղթական վարչութեան գլխաւոր Կրիվշէյնին հրամայված է լինել հողակազմութեան և հողագործութեան գլխաւոր կառավարչի օգնական։—Ներքին գործերի մինիստրը որոշեց դադարեցնել «Вечерняя Почта» լրագրի հրատարակութիւնը մի ամսով։

ԳՈՒՆԶԺՈՒԼԻՆ, 13 յունիսի։ Բանակում փոփոխութիւններ չը կան։ Կօրէայում եպիսկոպոսների շարժումը դէպի Նինգուտու շարունակվում է։

ՎԻԵՆՆԱ, 13 յունիսի։ Կառավարութիւնը վճռեց չարձակել ծառայութիւնը լրացրած նաւաստիներին։

ՏՕԿԻՕ, 14 յունիսի։ Եապօնական ֆինանսիստները էկօրէական կառավարութեան համար 2 միլիօն իէնի փոխառութիւն սարքեցին, որը ապահովացրած է պետական եկամուտներով։

ՍԱԽԱԼԻՆ։ Վերջապէս ստացվեց նոր ամառային պօստը, բայց հաւաքված պօստի մեծ մասը մնաց մայր ցամաքի վրա։ Ազգաբնակութիւնն շտապում է հնար եղածին չափով շուտով հեռանալ կղզուց, ալիւրի, մսի, աղի և ուրիշ անհրաժեշտ առարկաների պակասութեան պատճառով։

ԼՕՆԴՕՆ, 13 յունիսի։ Պրինց Արիսուգավիցի Լօնդոն այցելութիւնն աւելի կարևոր նշանակութիւն ունի, քան նրա միւս այցելութիւնները մայր տաճարում։ Բրիւսսէլում «Դէյլի Մայլի» թղթակցին նա ինքը յայտնեց, որ գընում է Լօնդոն միկադօի յատուկ յանձնարարութեամբ՝ դաշնակիցներին շնորհակալութիւն յայտնելու։ Պրինցը յայտնեց, որ ինքը դաշնակցութիւնը վերանորոգելու և զօրացնելու ջերմ կողմակից է և հաճութեամբ տեսնում է, որ մեծ յոյսեր կան այդ իրականացած տեսնելու։ Այդպիսով՝ Արիսուգավայի գալստեան վրա կարելի է նայել իբր Եապոնիայի կողմից առաջին քայլի վրա՝ երկարելու դաշնակցութիւնը, փոփոխելով նրան Անգլիայի օգտին, որ արդէն հրապարակօրէն Լանսդաունը մատնանիշ է արել։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով. իսկ Թիֆլիսինը 58 րոպէ կամ մի ժամ աւելի ուշ պէտք է հաշուել).

	Պօստ.	Մարդ.	Արագ.	Ապր.
Բագուից դուրս գալը	4.33	12.38	1.18	5.10
Թիֆլիս հասնելը	10.43 առ.	5.51	2.22	11.18
Թիֆլիսից դուրս գալը	11.28	6.39	10...	6.50
(Թիֆլիսի ժամանակով)	12.26	7.37	10.58	7.48
Բաթում հասնելը	12.31	7. 8	8.16	12.42
Բաթումից դուրս գալը	5.55	10. 9	9.33	
Թիֆլիս հասնելը	6.29	10.33	7.39	
Թիֆլիսից դուրս գալը	7.29	11.13	4.59	
(Թիֆլիսի ժամանակով)	8.27	12.11	5.57	
Բագու հասնելը	1.—	4.59	5.46	
Երևանից դուրս գալը	12.25			9.40
Կարսից » »	4.12			1.17
Ալէքսանդրօպոլ »	7.50			5.26
Թիֆլիս հասնելը »	5.24 առ.			3.28
Թիֆլիսից դուրս գալը	11.50 գիշ.			2.50
(Թիֆլիսի ժամանակով	42 48 գիշ.			3.48 ց.
Ալէքսանդրօպ. » »	10.50			2.44
Կարս հասնելը	2.20			6. առ.
Թիֆլիս »	4.48			8.52

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
ԶԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—11—12 ժ. մորթու, վեներակ և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԴԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՇԵՐԲԻՆԻՆԱ—1½-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ի. Գ ԱԲԵԱՆՑ—7—8 ժ. ներքին հիւանդ.
Գ. Ա. ԱՐԴԱԶԻԱՆԻ. Կատարում է միկրօ-քիմիական և բակտերիօլոգիական հետազօտութիւններ։
Օ. Ա. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—առնը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ..
Վճարը 50 կ. չքաւորները՝ ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցում ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ։
Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի.

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ
Պեատիգօրսկում ընդունում է սիֆիլիսի, միզասեռական և վիրաբուժական հիւանդ։
Пятигорскъ, домъ Померанцева. 28—50

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ
Ս. Գ. Շերմազանեանց
Ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 3—6, Երևանեան հրապարակ, տուն Արղութեան, լուսանկար. Լալայեանցի բնակարան։

Վաճառվում է Վաղարշապատում
(ոչ հեռու Էջմիածին կայարանից) մեծ քանակութեամբ (130 թնդութիւն) տեղական, սպիտակ բնական լաւ
ԳԻՆԻ
Վեդրօն 80 կոպէկով
Ըստ ցանկութեան 50—7000 վեդրօ։
Հասցէն՝ Вагаршапатъ. Татевосу Аскарянцу.
1—3

Ցարիցինի հայոց եկեղեցու հոգաբարձութիւնը հրաւիրում է մի քահանայ կամ քահանայացու։ Ռոճիկը 600 ռուբլի, բացի արդիւնքից, Ցարիցինի քահանայի ծխականները և հեռաւոր քաղաքներում բնակվող հայերը—Սարատով, Սամարա, Սիզրան, Պենզա, Բալաշով, Բորիսոգլէբսկ, Ուրիւպին, Կամիշին, Դուբովկա և այլն։
Դիմումն անողները պէտք է ունենան յանձնարարական, լինեն կրթված, ցենզաւոր, գիտենան ձայնագրութիւն, ունենան փոքր ի շատէ յաջող ձայն. դիմել հետևեալ հասցէով՝ Царицынъ Н/В Павлу Сергѣевичу Кистову.
1—3

Լոյս է տեսել Գ. Մելիք-Կարագեօզեանի հրատարակութեամբ
ՄԱՐԴՈՒ ԿԱԶՄՈՒԱԾՔԸ
Կազմալուծուող և այլ պատկերներով։
Գինը 60 կոպ.
Կազմալուծուող ճկարը պատուիրված է եղել Գերմանիայում։
(Կ.Հ.) 2—2

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ
Սոֆիա Ի. Գէլբօրտտ-Լօկշ
Տեղափոխվել է Կաղնաչէյսկի փողոց № 7, տուն իշխ. Թումանօվայի, Ալէքսանդրեան այգու դիմացը։ (Կ.Հ.Հ.) 2—100

Մի հայուհի ցանկանում է հայերէն դասեր ունենալ հայ ընտանիքում խիստ հաղեստ պայմանով, համաձայն է ամարանոց գնալ, եթէ իրանք առաջարկեն. հասցէն Զուզուրէթ I արսենալսկի փողոց, № 5 Ախունդովի տուն, Ս. Փափազեան։ 2—5

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԷՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային և սիֆիլիտիքական հիւանդութիւնների,—ընդունում է հիւանդներին առաւօտեան 12 ժ.—1 ժ. երեկոյեան՝ 6 ժ.—9 ժ.։ Կուկիա, Սեմեոնովսկայա փ. № 20.
(Ե. Հ. Շ. Կ.) 34—30

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. Յ. Քաբանեանց
մեկնեց Կովկասի հանքային ջրերը և անցեալ տարիների նման այս ամառը ևս կընդունէ ներքին և ջղային հիւանդութիւն ունեցողներին Պեատիգօրսկում և Էսսէնտուկիում մայիսի 17-ից։ (Կ.Ե. Չ.) 20—20

Բժիշկ Ն. Տ. Մուլին
Քթի, բգի և ականջի հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր առաւօտեան 12—2 ժամը, իսկ երեկոյեան 6—8 ժամը։ Սուդերևի փող. № 26։ (Ե. Չ. Ե) 16—15

Ուշադրութիւն
Շուտով լոյս է տեսնելու մի փոքրիկ
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Բագուի աղէտների մասին գրված նկարագրութիւններից, որոնք մեծ մասամբ տպագրված են «Մշակ»-ում։ Գրքոյկի գինը կը լինի 20 կոպէկ, որի օգուտի զուտ կէսը յատկացվում է Նախիջեւանի կոտորածին զոհ գնացածների ընտանիքներին։ Հաշուետուութիւնը կը լինի հրապարակով։ Առ այժմ տպելու քանակութիւնը անորոշ է, որովհետև գուցէ կը լինեն անձնաւորութիւններ, որոնք մեծ քանակութեամբ կը պահանջեն այդ գրքերից ցրվելու համար։ Գրավաճառներին զիջում 20 տոկոս։ Գրքերը կը վաճառվեն ԿԱՆԽԻԿ։ Դիմել՝ Тифлисъ, типографія «Гермесъ» Айрапету Бабурянцу.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆԱԿ ՄՈՒՇՏԱՅԻԴ ԱՅԳՈՒՄ
„Պրիմօ-Վիվանտօգրաֆ“
Ամեն կիրակի և տօն օրերը ես հնարաւոր եմ գտել տալ հասարակութեան տեսնել իմ պատկերները, ուստի և նշանակում եմ բացառապէս ժողովրդական ներկայացումն ժամը 12-ից—5-ը, ամեն մի ժամ, 10 կոպէկ վճարով, իսկ ժամը 6-ից 12-ը ամենքի համար սովորական գներով։ Բեպերտուարում կան բազմաթիւ նոր պատկերներ։ Երեկոյեան ժամը 9-ից հասակաւորների համար կօմիկական և պիկանտ պատկերներ պարիզեան ժանրով երեք մասից։
2—2 Ս. Իվանեցկայա

ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
ԽԱՐԿՕՎԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱԶՔԻ
Կլինիկայի օրդինատոր
Ե. Վ. ԳՕՐԲՕՎՍԿԻՑ-ԶԱՐԱՆԵՕԿԸ
ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան 10—12 և երեկոյեան 5—7 ժամերին։
Գոլովինսկի պրոսպէկտ, տուն Դօրբժանսկու, Կայսերական թատրոնի դիմացը։
1—3

Բացված է ՁՈՐՍ ԱՄՍՎԱՅ բաժանորդագրութիւն
ՀԱՍԿԵՐ
Մանկական պատկերազարդ ամսագրի
1905 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ
Ամսագիրը լոյս է տեսնելու 32—48 երեսանոց մեծադիր գրքոյկներով և հրատարակվելու է հետևեալ ծրագրով
1. Բանահիւսութիւն՝ արձակ և ոտանաւոր (վէպ, պատմուածք, պատկեր, բեմական գրուածք, պօէմ, բանաստեղծութիւն, առակ և այլ գեղարուեստական երկեր)։—2. Կենսագրութիւն։—3. Ճանապարհորդութիւն։—4. Գիտական-հանրամատչելի յօդուածներ աշխարհագրութիւնից, պատմութիւնից, ընդհանրութիւնից և գիտութեան այլ ճիւղերից։—5. Յօդուածներ գեղարուեստի մասին։—6. Մանր լուրեր և Այլևայլք։—7. Ֆիզիքական փորձեր, խաղեր, շարադրներ, ռեբուսներ և զանազան զուարճալիքներ։—8. Թղթակցութիւն մանուկ ընթերցողների հետ։
Ամսագրի նպատակն է ա) ներշնչել մանուկ ընթերցողներին վսեմ ձգտումներ, արծարծելով նրանց մէջ սէր դէպի մարդը և դէպի հայրենի միջավայրը, բ) տալ նրանց ճիշդ հասկացողութիւններ ընութեան և մարդու մասին, գ) զարգացնել նրանց ճաշակը և դ) ուրախութիւն եւ աշխոյժ մտցնել մանկական կեանքի մէջ։
Ամսագիրը ունենալու է նաեւ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ, որ հրատարակվելու է իւրաքանչիւր ամիս 16—24 երեսանոց առանձին տետրերով, հետեւեալ ծրագրով.
1. Յօդուածներ և ռեֆերատներ մանուկների ֆիզիքական, մտաւոր և բարոյական կրթութեան զանազան խնդիրների մասին։—2. Նորութիւններ դպրոցական կեանքից և մանկավարժական գրականութիւնից։—3. Մատենախօսութիւն և քննադատութիւն մանկավարժական և մանկական գրքերի։—4. Մանր լուրեր և Այլևայլք։—5. Խորհուրդներ, հարցեր և պատասխաններ։—6. Պօստարկղ։—7. Ցայտարարութիւններ։
Այս բաժինը ի նպատակ ունի՝ ա) օգնել ծնողներին և առհասարակ մանուկների դաստիարակութեամբ պարապողներին լուսաբանելու ընտանեկան և հասարակական կրթութեան ճշմարիտ նպատակներն ու միջոցները ներկայ պարագաներում, երբ հայ ընտանիքը ենթարկվում է անխուսափելի արմատական փոփոխութիւնների, բ) իրար մօտեցնել դպրոցը և ընտանիքը և գ) գործնական ցուցմունքներով դիւրացնել ընտանեկան դաստիարակութեան գործը, մանկական ընթերցանութեան և տնային զուարճութիւնների կազմակերպութիւնը, դաստիարակների և վարժուհիների ընտրութիւնը և այլն։
Զորս ամսվայ բաժանորդագինն է.
ՀԱՍԿԵՐ մանկական բաժինն Թիֆլիսում և Թիֆլիսից դուրս . . . 1 ր. մանկավարժական բաժնով . 1 ր. 40 կ.
Արտասահմանում . . . ԵՐԵՔ ֆ. ՁՈՐՍ ֆ.
Խմբագիր-Հրատարակիչ՝ Կաս. Լիսիցեան
Բաժանորդ կարելի է գրվել՝ խմբագրատանը, Թիֆլիս, Բեհբութեան փ. № 29, (Редакція журнала «Аскеръ», կամ Rédaction du journal «Hasker») և «Գուտտենբերգ» և «Կենտրոնական» գրախանութներում։

ԲԱՑՎԱԾ ԷԲ ԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՆԻ
Շքեղ պատկերազարդ հրատարակութեան
հեղինակութիւն ԼԷՕԻ
Բովանդակութիւն. Ուղևորի տպաւորութիւններ.—Անիի և շրջականների տեղագրութիւն.—Բագրատունիների թագաւորութեան սկիզբը և անկումը, ընդարձակ տեսութիւն.—Անիի անցեալը։
Ստուար հատոր, զարդարված 100 ից աւել պատկերներով և բազմաթիւ զարդանկարներով ու օրնամենտներով, որոնք ընդօրինակված են Անիի քանդակներից։ Առանձին՝ Մայր Եկեղեցին, մեծադիր, գունաւոր պատկեր, գործ ճարտարապետ պ. Թորամանեանի։
Գիրքը կը տպագրվի արտասահմանում։
Բաժանորդագինն է 5 ռուբլի։
Կարելի է վճարել և մաս-մաս.—գրվելիս 2 ռուբլի, իսկ մնացած 3 ռուբլին մինչև գրքի լոյս տեսնելը։
Գրվել կարելի է Թիֆլիսում, 1) «Մշակի» խմբագրատանը (Редакція «Мшакъ»), 2) «Գուտտենբերգ» գրավաճառանոցում։ (Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ“.)

Ս. Պետերբուրգի մեքենայական արդիւնաբերական ընկերութեան
ԱՄՈՒՐ, ՃԱՇԱԿՈՎ և ԹԵԹԵՒ, ԿԱՆԱՆՑ, ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՐԵԽԱՆԵՐԻ
ԿՕՇԻԿՆԵՐ,
նոյնպէս և սկօրօխօդներ ու սանդալներ կարելի է ստանալ Թիֆլիսում և Անդրկովկասի միւս քաղաքներում ԱՄԵՆԱՀԱՍ վաճառատներում.
ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
С.ПЕТЕРБУРГЪ.
Խնդրվում է ուշք դարձնել ֆաբրիկայի նշանի վրա։
Խոշոր չափերով վաճառումը կատարում է «Լէօպոլդ Նէյշէլէր» առևտրական տունը Երևանեան հրապարակում, հեռախօս № 346։ Նոյն տեղում կայ մեծ քանակութեամբ ԿԱՇԻԵՂԷՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ ռուսական և արտասահմանեան։

Дозволено цензурою. Тифлисъ, 14-го іюня 1905 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» բնկ. Электропечатня типографскаго Т—ва „Гермесъ“. Мад. ул. № 15.